

Հարցաշար
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի
մարզային փուլ
10-րդ դասարան - 120 րոպե

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Քանի՞ գրքից է բաղկացած Հին Կտակարանը. *(0,5 միավոր)*
1) 40 գրքից 2) 27 գրքից 3) 48 գրքից 4) 4 գրքից

2. Ղպտի եկեղեցին պատկանում է քրիստոնեական եկեղեցու հետևյալ հիմնական ուղղությանը. *(0,5 միավոր)*
1) Օրթոդոքս 2) Արևելյան ուղղափառ 3) Բողոքական 4) Կաթոլիկ

3. Մկրտության ավագանի մոտ քահանան երեք անգամ հարցնում է կնքահորը, թե երեխան ի՞նչ է ցանկանում: Կնքահայրը պատասխանում է՝ *(0,5 միավոր)*
1) հավատք, հույս, սեր և օրհնություն 2) հավատք, հույս, սեր և խոնարհություն
3) հավատք, հույս, սեր և մկրտություն 4) հավատք, հույս, սեր և իմաստություն

4. Վրթանես Ա Պարթևը գահակալել է՝ *(0,5 միավոր)*
1) 325–333 թթ. 2) 333-341 թթ. 3) 341-347 թթ. 4) 347-353 թթ.

5. Ե՞րբ գումարվեց Հռոմկլայի համահայկական եկեղեցական ժողովը. *(0,5 միավոր)*
1) 1165 թ. 2) 1173 թ. 3) 1178 թ. 4) 1193 թ.

6. Հայոց ո՞ր կաթողիկոսն է լիազորում Պողոս Նուբար փաշային մեծ տերություններին ներկայացնել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների հարցը՝ *(0,5 միավոր)*
1) Մկրտիչ Ա Խրիմյանը 2) Մատթեոս Բ Իզմիրլյանը
3) Գևորգ Ե Մուրեյանցը 4) Խորեն Ա Մուրադբեկյանը

- 7) Հայոց ո՞ր կաթողիկոսի տապանաքարին են գրված <<Պաշտպան հայրենեաց>> բառերը: *(0,5 միավոր)*

14. Հայոց կաթողիկոսի գահակալման տարեթվերը համապատասխանեցնել նրանց անվանը. *(1 միավոր)*

- | | |
|--------------------------------|------------------|
| 1) Գևորգ Ե Սուրենյանց | ա) 1866-1882 թթ. |
| 2) Մկրտիչ Ա Խրիմյան | բ) 1911-1930 թթ. |
| 3) Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի | գ) 1843-1857 թթ. |
| 4) Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի | դ) 1892-1907 թթ. |
| | ե) 1858-1865 թթ. |

1	
2	
3	
4	

№ 15-17

Աշխատանք սկզբնաղբյուրով

15. *«Մի բան է իմանալ, թե ինչ է բարին, մի այլ բան՝ բարիք գործելը»:*

Հին աշխարհի ո՞ր ականավոր մտածողն է բերված խոսքերի հեղինակը:

(1 միավոր)

16. *«Երանի նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը ...»:*

Ավետարանի ո՞ր հատվածից են մեջբերված խոսքերը:

(1 միավոր)

17. *«Եվ կամ՝ երբ ավազակախումբը արշավում է երկիրը՝ մարդկանց կողոպտելու և կոտորելու համար, թող գորք չհավաքեն ու իրար հետևից գնդեր չկազմեն՝ երկրից ավազակներին դուրս քշելու համար, այլ թող պատճառաբանեն, թե՛ «երկրի ճակատագիրն է ավազակից կոտորվել, մենք ինչո՞ւ պիտի դեմ գնանք ճակատագրին»:*

1) Ո՞վ է բերված խոսքերի հեղինակը:

(1 միավոր)

2) Ո՞ր աշխատությունից է արված մեջբերումը:

(1 միավոր)

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Տրված բացատրություններից ո՞ր երկուսն են սխալ.

(1 x 2 = 2 միավոր)

- 1) Կյանքի վերջին տարիներին Գրիգոր Լուսավորիչն առանձնացել էր Նպատ լեռան վրա գտնվող այրերից մեկում:
- 2) Քրիստոնեական եկեղեցու երկրորդ մեծ բաժանումը տեղի ունեցավ 1054 թվականին:
- 3) Գանձասարի վանքի մասին առաջին տեղեկությունը հայտնել է Անանիա Ա Մոկացի կաթողիկոսը:
- 4) Եղիազար Ա Այնթափեցի կաթողիկոսի օրոք կառուցվեցին Վաղարշապատի Ս. Շողակաթ, Երևանի Կոնդի և Քանաքեռի եկեղեցիները :
- 5) Աստվածաշնչի ամբողջական բնագրի աշխարհաբար թարգմանությունն իրագործվեց 1984-1991 թթ.:

19. Բերված փաստարկներից ո՞ր երկուսն են ճիշտ.

(1 X 2 = 2 միավոր)

- 1) Վան քաղաքի միջնաբերդում գտնվող Մհերի դուռ կողմող ժայռի վրա Սարգուրի արքան փորագրել տվեց իր տերության բոլոր աստվածների անունները:
- 2) Ըստ զրադաշտական կրոնի՝ չար ուժերի ստեղծողն ու հովանավորը Ահրիմանն էր:
- 3) Հին աշխարհում բարոյականության հարցերն առաջինը հատուկ ուսումնասիրության նյութ դարձրին նիհիլիստները (Ք. ա. 5-րդ դ.):
- 4) 451 թ. գումարված եկեղեցական ժողովը դատապարտեց Եվտիմեսի ուսմունքը և ընդունեց Հիսուսի երկու բնությունների բանաձևը:
- 5) Մուհամմադի մահվանից հետո նրա հետևորդները մարգարեի քարոզները հավաքեցին մի ժողովածուի մեջ, որը հետագայում կոչվեց «Թալմուդ»:

№ 20

Շարադրանք (2 միավոր)

Ներկայացնել Հին աշխարհի նախաքրիստոնեական բարոյագիտական ուղղությունները (սոփեստներ, Սոկրատես, Պլատոն, Արիստոտել):